ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2022թ. ապրիլի 4 N 148-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 28-ի N 42-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ՀԱԷԿ-Ի ՄԻՋՈՒԿԱՅԻՆ ԵՎ /ԿԱՄ/ ՃԱՌԱԳԱՅԹԱՅԻՆ ՎԹԱՐԻ ԴԵՊՔՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԼԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ կետով, 33-րդ հոդվածի 1-ին կետով, 34-րդ հոդվածի 1-ին կետով և հիմք ընդունելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ կետը՝

Որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի 2014 թվականի ապրիլի 28-ի N 42-Ա որոշմամբ հաստատված հավելված N 2-ում՝ «ՀԱԷԿ-Ի միջուկային և /կամ/ ճառագայթային վթարի դեպքում Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի բնակչության պաշտպանության պլան»-ում (Այսուհետ՝ Պլան) կատարել հետևյալ փոփոխությունները.

1) Պլանի I գլխի 3-րդ կետը, վերնագրից հետո, շարադրել նոր խմբագրությամբ.

«ա) Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարան,

բ) Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Արագածոտնի մարզային փրկարարական վարչություն (Այսուհետ՝ ՀՀ ԱԻՆ ՓԾ Արագածոտնի ՄՓՎ/,

գ) Հայաստանի Հանրապետության Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի Արագածոտնի տարածքային բաժին,

դ) Արագածոտնի մարզի տարածքում գործող «ՀԷՑ» ՓԲԸ «Մուսալեռ» մասնաճյուղի ստորաբաժանումներ,

ե) Արագածոտնի մարզի տարածքում գործող «Վեոն Արմենիա» ՓԲԸ-ի ստորաբաժանումներ,

զ) Արագածոտնի մարզի տարածքում գործող «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի ստորաբաժանումներ,

է) Հայաստանի Հանրապետության ԱԱԾ Արագածոտնի մարզային վարչություն,

ը) «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ Արագածոտնի գազամատակարարման և գազաֆիկացման մասնաճյուղ,

թ) Հայաստանի Հանրապետության ոստիկանության Արագածոտնի մարզային վարչություն,

ժ) Արագածոտնի մարզի տարածքում գործող «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի ստորաբաժանումներ,

ժա) Հայաաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Աշտարակի համայնքապետարան,

ժբ) Հայաաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Թալինի համայնքապետարան»:

2) Պլանի I գլխի 4-րդ կետը, վերնագրից հետո, շարադրել նոր խմբագրությամբ.

«1) «Միջուկային անվտանգության մասին» կոնվենցիա (վավերացվել է 24.09.1997թ.),

2) «Միջուկային վթարի մասին, օպերատիվ տեղեկացման մասին կոնվենցիա» (վավերացվել է 22.06.1993թ.),

3) «Միջուկային վթարի կամ ճառագայթային վթարային իրավիճակի դեպքում օգնության մասին» կոնվենցիա (վավերացվել է 22.06.1993թ.),

4) «Բնական և տեխնածին բնույթի արտակարգ իրավիճակների մասին տեղեկատվության փոխանակման, դրանց հետևանքների վերացման ժամանակ տեղեկատվական փոխգործակցության և տուժած բնակչությանն օգնություն ցույց տալու մասին» համաձայնագիր (վավերացվել է 19.08.2004թ.),

5) «Խաղաղ նպատակներով ատոմային էներգիայի անվտանգ օգտարործման մասին» Հայաստանի Հանրապետության օրենք,

6) «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենք,

7) «Քաղաքացիական պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենք,

8) «Փրկարար ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենք,

9) «Ոստիկանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենք,

10) «Պետական նյութական պահուստի մասին» Հայաստանի Հանրապետության օրենք,

11) «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենք,

12) «Հիդրոօդերևութաբանական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենք,

13) Հայաստանի Հանրապետության կառավարության 2011թ. օգոստոսի 18-ի «Վտանգավոր տարածքներից բնակչության տարհանման կարգը հաստատելու մասին» N 1180-Ն որոշում,

14) Հայաստանի Հանրապետության կառավարության 2000թ. սեպտեմբերի 28-ի «Բնակչության պատսպարման կարգը հաստատելու մասին» N 592 որոշում,

15) Հայաստանի Հանրապետության կառավարության 2000թ. հոկտեմբերի 25-ի «Բնակչությանն անհատական պաշտպանության միջոցներով ապահովելու կարգը հաստատելու մասին» N 679 որոշում,

16) Հայաստանի Հանրապետության կառավարության 2017թ. ապրիլի 6-ի «Հայաստանի Հանրապետության տարածքում արտակարգ իրավիճակների առաջացման կամ դրա սպառնալիքի, Հայաստանի Հանրապետության վրա զինված հարձակման, դրա անմիջական վտանգի առկայության կամ պատերազմ հայտարարելու դեպքում ու ռազմական դրության պայմաններում պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների, բնակչության ազդարարման և իրազեկման կարգը սահմանելու մասին» N 346-Ն որոշում,

17) Հայաստանի Հանրապետության կառավարության 2004թ. հուլիսի 29-ի «Ճառագայթային, քիմիական ու մանրէաբանական իրավիճակի մշտական հսկողության համակարգի ստեղծման և գործունեության ապահովման կարգը սահմանելու մասին» N 1064-Ն որոշում,

18) Հայաստանի Հանրապետության կառավարության 2015թ. հունվարի 22-ի «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության ոլորտներում Հայաստանի Հանրապետության պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների ու կազմակերպությունների պատրաստման և տվյալ ոլորտների հիմնահարցերով բնակչության ուսուցման կարգն ու ծրագիրը սահմանելու մասին» N 46-Ն որոշում»:

3) Պլանի II գլխի 7-րդ կետի 6-րդ ենթակետի վերնագիրը շարադրել նոր խմբագրությամբ.

«Արագածոտնի մարզի տարածքում գործող «ՀԷՑ» ՓԲԸ «Մուսալեռ» մասնաճյուղի ստորաբաժանումների կողմից իրականացվող գործառույթներն են՝»:

4) Պլանի II գլխի 7-րդ կետի 7-րդ ենթակետի վերնագիրը շարադրել նոր խմբագրությամբ՝

«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ Արագածոտնի գազամատակարարման և գազաֆիկացման մասնաճյուղի կողմից իրականացվող գործառույթներն են՝»:

5) Պլանի II գլխի 7-րդ կետի 8-րդ ենթակետի վերնագիրը շարադրել նոր խմբագրությամբ՝

«Հայաստանի Հանրապետության Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի Արագածոտնի տարածքային բաժնի կողմից իրականացվող գործառույթներն են՝»:

6) Պլանի II գլխի 7-րդ կետի 9-րդ ենթակետի վերնագիրը շարադրել նոր խմբագրությամբ՝

«Արագածոտնի մարզի տարածքում գործող «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի ստորաբաժանումների կողմից իրականացվող գործառույթներն են՝»:

7) Պլանի II գլխի 7-րդ կետի 14-րդ ենթակետի վերնագիրը շարադրել նոր խմբագրությամբ՝

«Արագածոտնի մարզի տարածքում գործող «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի ստորաբաժանումների կողմից իրականացվող գործառույթներն են՝»:

8) Պլանի II գլխի 7-րդ կետի 15-րդ ենթակետի վերնագիրը շարադրել նոր խմբագրությամբ՝

«Արագածոտնի մարզի տարածքում գործող «Վեոն Արմենիա» ՓԲԸ-ի ստորաբաժանումների կողմից իրականացվող գործառույթներն են՝»:

9) Պլանի II գլխի 26-րդ կետի 7-րդ ենթակետում «ՀՀ տրանսպորտի և կապի նախարարությունը» բառերը փոխարինել «ՀՀ տրանսպորտի ոլորտը կարգավորող համապատասխան մարմինը» բառերով:

10) Պլանի II գլխի 26-րդ կետի 8-րդ ենթակետում «ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության» բառերը փոխարինել «ՀՀ կապի ոլորտը կարգավորող համապատասխան մարմնի» բառերով:

11) Պլանի II գլխի 26-րդ կետի 9-րդ ենթակետում «ՀՀ տրանսպորտի և կապի նախարարությունը» բառերը փոխարինել «ՀՀ կապի ոլորտը կարգավորող համապատասխան մարմինը» բառերով:

12) Պլանի II գլխի 31-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ՝

«ՀԱԷԿ-ի միջուկային և /կամ/ ճառագայթային վթարների դեպքում տարհանման միջոցառումների իրականացման համար անհրաժեշտ տրանսպորտային միջոցներն ապահովելու նպատակով, ըստ ներկայացրած համապատասխան հայտի, ՀՀ տրանսպորտի ոլորտը կարգավորող համապատասխան մարմինը ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության

պետական ռեզերվների գործակալությունից ստանում է անհրաժեշտ քանակի վառելիքաքսուկային նյութեր»:

13) Պլանի III գլխի 36-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ՝

«ՀՀ ԱԻՆ ՓԾ ճգնաժամային կառավարման ազգային կենտրոնից ազդարարվում են՝ մոնիթորինգի խմբերի ղեկավարները, ՀՀ ԱԻՆ ՓԾ Արագածոտնի ՄՓՎ ՃԿԿ կրտսեր հրահանգիչը: ՀՀ ԱԻՆ ՓԾ Արագածոտնի ՄՓՎ ՃԿԿ կրտսեր հրահանգիչը ահազանգը ճշտելուց հետո զեկուցում է մարզպետին, վարչության պետին և նրանց հրահանգով իրականացնում մարզի ԱԻ հանձնաժողովի և ՄՓՎ անձնակազմի ազդարարում»:

14) Պլանի III գլխի 40-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ՝

«ՇՊՄՊ գոտում Նոր Ամանոս և Արագածոտն բնակավայրերի բնակչության ազդարարումն իրականացվում է ՀՀ ԱԻՆ ՓԾ Արագածոտնի ՄՓՎ ՃԿԿ կրտսեր հրահանգչի և ՀՀ ԱԻՆ ՓԾ ճգնաժամային կառավարման ազգային կենտրոնի կողմից՝ «Ճառագայթային վտանգ» ազդանշանը հնչեցնելու միջոցով»:

15) Ամբողջ պլանում «ՀՀ ԱԻՆ ՓԾ ճգնաժամային կառավարման կենտրոն» բառերը փոխարինել «ՀՀ ԱԻՆ ՓԾ ճգնաժամային կառավարման ազգային կենտրոն» բառերով:

16) Ամբողջ պլանում «ՀՀ ԱԻՆ ՓԾ Արագածոտնի ՄՓՎ դիսպետչեր» բառերը փոխարինել «ՀՀ ԱԻՆ ՓԾ Արագածոտնի ՄՓՎ ՃԿԿ կրտսեր հրահանգիչ» բառերով:

17) Պլանի III գլխի 48-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ՝

«Մարզի ԱԻ հանձնաժողովը կառավարումն իրականացնում է հիմնական կառավարման կետից՝ մարզպետարանի վարչական շենքից, իրավիճակի կտրուկ վատթարացման դեպքում տեղափոխվում է մարզպետի պահեստային կառավարման կետ»:

18) Պլանի III գլխի 54-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ՝

«Տարհանումը կարող է իրականացվել ՆՊՄԻ և ՇՊՄՊ գոտիներում ընդգրկվող ՀՀ Արագածոտնի մարզի 3 բնակավայրերից»:

19) Պլանի IV գլխի 84-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ՝

«Պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների ու կազմակերպությունների պատրաստման, դրանց ղեկավար կազմի, աշխատողների ու բնակչության ուսուցման գործընթացը կազմակերպվում և իրականացվում է համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2015թ. հունվարի 22-ի «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության ոլորտներում Հայաստանի Հանրապետության պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների ու կազմակերպությունների պատրաստման և տվյալ ոլորտների հիմնահարցերով բնակչության ուսուցման կարգն ու ծրագիրը սահմանելու մասին» N 46-Ն որոշման»:

2. Պլանում Հայկական ատոմային էլեկտրակայանի վթարի դեպքում բնակչության տարհանման միջոցառումների կառավարման սխեման փոխարինել նոր լրամշակված տարբերակով՝ համաձայն հավելված 1-ի:

3. Պլանում նախահարձակ պաշտպանական միջոցառումների իրականացման և շտապ պաշտպանական միջոցառումների պլանավորման գոտիներում բնակչության վահանաձև գեղձի արգելափակման հաշվարկը փոխարինել նոր լրամշակված տարբերակով՝ համաձայն հավելված 2-ի:

4. Պլանում նախահարձակ պաշտպանական միջոցառումների իրականացման և շտապ պաշտպանական միջոցառումների պլանավորման գոտիներում բնակչության պատսպարման հաշվարկը փոխարինել նոր լրամշակված տարբերակով՝ համաձայն հավելված 3-ի:

5. Պլանում նախահարձակ պաշտպանական միջոցառումների իրականացման և շտապ պաշտպանական միջոցառումների պլանավորման գոտիներից բնակչության տարհանման միջանկյալ կետերի հաշվարկը փոխարինել նոր լրամշակված տարբերակով՝ համաձայն հավելված 4-ի:

6. Պլանում նախահարձակ պաշտպանական միջոցառումների իրականացման և շտապ պաշտպանական միջոցառումների պլանավորման գոտիներում բնակչությանն անհատական պաշտպանության միջոցներով ապահովման հաշվարկը փոխարինել նոր լրամշակված տարբերակով՝ համաձայն հավելված 5-ի:

7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Недействительная подпись

X

VERIFIED OCSP 04.04.2022 14:11:59 GMT+4

Подписано: MOVSISYAN SERGEY 3309890457

Ս.ՄՈՎՍԻՍՅԱՆ